Luys Լույս




# ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ ԱՄԻՍՆԵՐԻՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ ... 1
   1.1. Արդյունաբերություն ... 2
   1.2. Շինարարություն ... 3
   1.3. Ծառայություններ ... 4
   1.4. Առևտուր ... 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ ... 5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ... 7
4. ՓՈԽԱՐԺԵՔ ... 8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ ... 9
   5.1. Բյուջեի եկամուտները ... 9
   5.2. Բյուջեի ծախսերը ... 11
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը ... 12
   5.4. Պետական պարտք ... 12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ ... 13
   6.1. Գնաճ ... 13
   6.2. Ավանդներ ... 14
   6.3. Վարկեր ... 15
   6.4. Դրամական փոխանցումներ ... 18
7. ԱՄՓՈՓՈՒՄ ... 18

# 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականը ՀՀ տնտեսությունը սկսել է բավական բարձր տնտեսական ակտիվության աճով՝ հիմնականում պայմանավորված նախորդ տարվա բարձր աճի գործոնների ազդեցությունների պահպանմամբ: Հետևաբար, տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի) դինամիկան 2023թ. ընթացքում զգալիորեն կապված կլինի նախորդ տարիների զարգացումների հետ: Մասնավորապես, այն ամիսներին, երբ նախորդ տարի գրանցվել էր աճի դանդաղում, այս տարի կնկատվի աճի արագացում և ընդհակառակը (այս երևույթը կոչվում է բազայի էֆեկտ): 2023թ. մարտին տնտեսական ակտիվության աճի տեմպն արագացել է (համահունչ լինելով նշված տրամաբանությանը, քանի որ նախորդ տարվա մարտին գրանցվել էր աճի դանդաղում)՝ հասնելով 14.0%-ի՝ նախորդ ամսվա 11.3%-ի դիմաց: Հունվար-մարտ ամիսների ՏԱՑ-ը կազմել է 12.2%՝ հունվար-փետրվարի ՏԱՑ-ի համեմատ արագանալով 1.3 տոկոսային կետով, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ՏԱՑ-ը դանդաղել էր 1.7 տոկոսային կետով:

**Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %**




2023թ. հունվար-մարտ ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և ծառայությունների աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ի աճին կազմել են 8.2 և 5.3 տոկոսային կետ: Շինարարության ճյուղն էականորեն ավելի փոքր նպաստում է ունեցել՝ շուրջ 0.8 տոկոսային կետ, իսկ արդյունաբերության նպաստումը փոքր-ինչ մեծացել է նախորդ ամսվա համեմատ՝ կազմելով 0.9 տոկոսային կետ:

Գյուղատնտեսության ոլորտում գրանցվել է փոքր աճ, սակայն այս ոլորտի զարգացումները շարունակում են մտահոգիչ մնալ: 2022թ. տարեկան արդյունքներով գյուղատնտեսության ոլորտում շարունակվել էր անկումը, որի չափը

կազմել է 0.7%: Ընթացիկ տարվա հունվար-մարտ ամիսներին գյուղատնտեսության ոլորտում գրանցվել է ընդամենը 1.4% աճ, որի նպաստումն ընդհանուր ՏԱՑ-ին եղել է գրեթե զրոյական՝ կազմելով 0.1 տոկոսային կետ:

**Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2023թ. հունվար-մարտ ամիսներին, տոկոսային կետ**




## 1.1. Արդյունաբերություն

**Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %**




**Արդյունաբերության ոլորտում աճի տեմպն էականորեն արագացել է, ինչը հիմնականում բազայի էֆեկտի արդյունք է:** Ընթացիկ տարվա մարտին արդյունաբերության աճը կազմել է 8.6%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 7.9 տոկոսային կետով, այն դեպքում, երբ նախորդ տարի համապատասխան ժամանակահատվածում արդյունաբերության աճը դանդաղել էր 9.4 տոկոսային

կետով: Նախորդ տարվա մարտին արդյունաբերության անկումը կապված էր հանքարդյունաբերության ոլորտում արտահանման լոգիստիկ խնդիրների առաջացմամբ, ինչի հետևանքով արտադրանքը գրեթե չէր արդյունահանվում: Հետևաբար, այդ իրավիճակի համեմատ ընթացիկ տարում գրանցվում են բարձր աճեր:

Արդյունաբերության հունվար-փետրվար[1] ամիսների 1.0% աճը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 6.6% աճով, որի նպաստումը կազմել է 3.5 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության ոլորտում շարունակվել են անկման միտումները: Հունվար-փետրվար ամիսներին անկումը կազմել է 9.6%՝ ընդհանուր արդյունաբերության աճին հակազդելով 2.6 տոկոսային կետով: «Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտը ընդհանուր արդյունաբերության աճին ունեցել է զրոյական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում գրանցվել է 8.6% աճ, ինչն արդյունաբերության աճին նպաստել է 0.1 տոկոսային կետով:

### 1.2. Շինարարություն

**Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %**




**Շինարարության ոլորտում աճի տեմպի արագացումը շարունակվում է:** Շինարարության աճն ընթացիկ տարվա մարտին կազմել է 19.0%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 5.1 տոկոսային կետով, ինչի հաշվին հունվար-մարտ ամիսներին կուտակային աճը ևս արագացել է՝ կազմելով 15.6%:

[1] Արդյունաբերության մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

## 1.3. Ծառայություններ

**Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %**




**Ծառայությունների ոլորտի աճը պահպանվում է բարձր մակարդակում:** Նախորդ տարվանից բարձր տնտեսական աճ ապահովող գործոնները՝ ՌԴ-ից մարդկանց և կապիտալի ներհոսքի կտրուկ աճը հանգեցրել են ծառայությունների ոլորտում տնտեսական ակտիվության էական աճին, ինչը պահպանվում է նաև 2023 թվականին: Մասնավորապես, 2023թ. մարտին ծառայությունների աճը կազմել է 21.9%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.7 տոկոսային կետով, իսկ հունվար-մարտ ամիսների կուտակային աճի ցուցանիշը կազմել է 22.9%:

Ծառայությունների ոլորտում, ըստ հունվար-փետրվար ամիսների տվյալների[2], բարձր աճին մեծամասամբ՝ 9.5 տոկոսային կետով, նպաստել է «տեղեկատվություն և կապ» ենթաոլորտի շուրջ 49.0% աճը: Էական նպաստում են ունեցել նաև «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ոլորտի, «տրանսպորտ» և «կացություն և հանրային սնունդ» ենթաոլորտների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 7.6, 3.2 և 2.0 տոկոսային կետ:

---

[2] Ծառայությունների ոլորտի մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

### 1.4. Առևտուր

**Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %**




**Առևտրի ոլորտում բարձր աճի տեմպերն ավելի են արագացել:** Ինչպես ծառայությունների, առևտրի դեպքում նույնպես գրանցվում է բարձր տնտեսական աճ, քանի որ արտաքին դրական շոկի ազդեցության զգալի մասը հենց այս ոլորտների վրա է արտացոլվում: 2023թ. մարտին առևտրի ոլորտի աճը կազմել է 26.1%, իսկ հունվար-մարտ ամիսների աճը՝ 21.0%:

## 2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

**Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ[3], %**




[3] Արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից, ինչի արդյունքում արտահանման աճի հունվար ամսվա ցուցանիշը 79.7%-ի փոխարեն կազմել է 88.4%, իսկ հունվար-փետրվար ամիսների ցուցանիշը 96.4%-ից դարձել է 105.0%:

**Արտահանման մասով բազայի ազդեցության գործոնը նույնպես էական դեր է խաղում:** Արտահանման ծավալի աճը 2023թ. հունվար-մարտին էլ ավելի է արագացել, նախորդ տարվա աճի դանդաղման պայմաններում և կազմել է 126.5% (շուրջ 2.3 անգամ): Սակայն, բացի նախորդ տարի աճի տեմպի դանդաղման հանգամանքից, բազայի էֆեկտը դրսևորվում է նաև այն գործոնով, որ նախորդ տարվա նույն ամիսներին վերարտահանման երևույթը նման մեծ չափեր դեռևս չուներ:

2023թ. հունվար-փետրվար ամիսների[4] արտահանման շուրջ 96.4% աճը հիմնականում պայմանավորված է եղել «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի համապատասխանաբար 18, 3.5 և 22 անգամ աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր արտահանմանը կազմել է 31.6, 29.5 և 20.7 տոկոսային կետ:

**Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ[5], %**




**Ներմուծման աճի տեմպը մարտին էականորեն արագացել է:** Ներմուծման ծավալները 2023թ. մարտին աճել են շուրջ 2.4 անգամ, ինչի արդյունքում արագացել է նաև կուտակային աճը՝ հունվար-մարտին կազմելով 89.1%:

Ներմուծման բարձր աճը 2023թ. հունվար-փետրվար ամիսներին[6] հիմնականում պայմանավորված է եղել «վերգետնյա, օդային և ջրային

[4] Արտաքին առևտրի մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:
[5] Ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից, ինչի արդյունքում արտահանման աճի հունվար ամսվա ցուցանիշը 73.3%-ի փոխարեն կազմել է 71.4%, իսկ հունվար-փետրվար ամիսներին ցուցանիշը՝ 67.4%-ից դարձել է 65.7%:
[6] Արտաքին առևտրի մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

տրանսպորտի միջոցներ» և «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերի ներմուծման բարձր աճերով, որոնք ընդհանուր ներմուծման աճին նպաստել են 25.1 և 24.3 տոկոսային կետով: Այս նույն ապրանքները նաև նպաստել էին արտահանման աճին, ինչը խոսում է վերարտահանման երևույթի շարունակման, նույնիսկ ավելի մեծացման մասին:

## 3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ[7]

**Անվանական աշխատավարձի աճի տեմպը բավական բարձր է:** Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2023 թվականի հունվար-փետրվար ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 21.6%-ով՝ կազմելով 249,696.0 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 25.3%-ով՝ կազմելով 276,579.0 դրամ: Սակայն պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է զգալիորեն ավելի ցածր՝ 8.5% տեմպով և կազմել է 186,791.0 դրամ:

Աշխատավարձերի աճին զուգահեռ, 2023թ. բավական բարձր է նաև գնաճը, որը հունվար-փետրվար ամիսներին կազմել է 8.1%: Այդ պայմաններում, իրական աշխատավարձի աճը եղել է զգալիորեն ավելի ցածր՝ ընդհանուր տնտեսությունում 12.5%, ոչ պետական հատվածում՝ 15.9%, իսկ պետական հատվածում աճը եղել է գրեթե զրոյական՝ ընդամենը 0.4%: Ինչպես նշել ենք նախորդ վերլուծություններում, պետական հատվածում իրական աշխատավարձերի ցածր աճը բավական խնդրահարույց երևույթ է, քանի որ աշխատողների զգալի հատվածի համար կենսամակարդակի էական փոփոխություն տեղի չի ունենում:

[7] Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

**Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2022-2023թթ. հունվար-փետրվարին, %**




## 4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)**






**ՀՀ դրամի փոխարժեքի արժևորման տեմպը շարունակում է արագանալ:** Հունվար-մարտ ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է շուրջ 23.9%-ով, եվրոյի նկատմամբ՝ 29.5%-ով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 7.0%-ով: ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի արժևորումը խորացել է, սակայն ՌԴ ռուբլու նկատմամբ ընդհակառակը՝ մեղմվել է: Միևնույն ժամանակ, ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը շարունակում է արժևորվել նախորդ ամիսների համեմատ (հունվարին միջին փոխարժեքը կազմել է 5.7 դրամ մեկ ռուբլու համար, իսկ մարտին հասել է 5.1 դրամի), ինչը կարող է լրացուցիչ բացասական ազդեցություն ունենալ ՌԴ-ում ՀՀ ապրանքների մրցունակության վրա:

## 5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

### 5.1. Բյուջեի եկամուտները

**Պետական բյուջեի ընդհանուր եկամուտներն աճել են, սակայն աճի տեմպը զգալիորեն զիջում է ինչպես նախորդ տարվա, այնպես էլ տնտեսության աճի տեմպին:** Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2023թ. մարտին աճել են 19.2%-ով, իսկ հունվար-մարտ ամիսների աճը կազմել է 13.7%, որն էապես ցածր է նախորդ տարվա նույն ամիսների 21.8% աճից: Բյուջեի եկամուտների աճի դանդաղումը պայմանավորված է մի կողմից հարկային եկամուտների աճի տեմպի դանդաղմամբ, մյուս կողմից այլ եկամուտների 9.8% և պաշտոնական դրամաշնորհների 30.8% նվազումներով:

Հարկային եկամուտների աճի տեմպը 2023թ. հունվար-մարտին կազմել է 15.2%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 2.5 տոկոսային կետով: Սակայն անվանական տնտեսական աճը նույն ժամանակահատվածում ավելի բարձր է եղել՝ կազմելով շուրջ 20.3%, ինչը նշանակում է, որ հարկային եկամուտների հավաքագրումը հետ է ընկնում տնտեսական ակտիվությունից:

**Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %**




Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է ԱԱՀ-ի (աճը՝ 16.5%) և եկամտային հարկի (աճը՝ 17.8%) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 5.9 և 5.0 տոկոսային կետ: Հարկային եկամուտների աճին բացասական նպաստում է ունեցել պետական տուրքերի 47.0% նվազումը, որը հարկերի աճին հակազդել է 2.8 տոկոսային կետով:

**Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների**

| | 2022թ. հունվար-մարտ | | 2023թ. հունվար-մարտ | |
|---|---|---|---|---|
| | Աճը, % | Նպաստումը, տոկոսային կետ | Աճը, % | Նպաստումը, տոկոսային կետ |
| **Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք** | **20.3** | **20.3** | **15.2** | **15.2** |
| **ԱԱՀ** | 21.8 | 7.6 | 16.5 | 5.9 |
| **Շահութահարկ** | 55.7 | 4.1 | 3.2 | 0.3 |
| **Եկամտային հարկ** | 3.6 | 1.2 | 17.8 | 5.0 |
| **Ակցիզային հարկ** | 29.1 | 1.6 | 36.1 | 2.2 |
| **Շրջանառության հարկ** | 28.5 | 0.7 | 31.3 | 0.8 |
| **Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար** | -5.4 | -0.2 | 1.5 | 0.0 |
| **Մաքսատուրք** | -31.8 | -1.9 | 21.5 | 0.7 |
| **Սոցիալական վճար** | 43.7 | 1.3 | 48.1 | 1.7 |
| **Այլ հարկային եկամուտներ** | 35.6 | 1.0 | 45.0 | 1.4 |
| **Պետական տուրք** | 226.0 | 4.9 | -47.0 | -2.8 |

## 5.2. Բյուջեի ծախսերը

**Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ**




**Պետական բյուջեի ծախսերի աճը 2023թ. հունվար-մարտ ամիսներին փոքր-ինչ արագացել է:** Ընդհանուր ծախսերի աճը կազմել է 6.5%՝ հունվար-փետրվարի համեմատ արագանալով 0.1 տոկոսային կետով: Ծախսերի աճը պայմանավորված է եղել ընթացիկ ծախսերի շուրջ 8.8% աճով, մինչդեռ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները (որոնք հիմնականում կապիտալ ծախսերն են) նվազել են 17.6%-ով՝ ընդհանուր ծախսերի աճին հակազդելով 1.5 տոկոսային կետով:

Կապիտալ ծախսերի կատարողականը շարունակում է մտահոգիչ մնալ: 2023թ. առաջին եռամսյակում իրականացվել է ընդամենը 30.4 մլրդ դրամի կապիտալ ծախս (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր), մինչդեռ ըստ բյուջեի պլանի նախատեսված էր իրականացնել 98.1 մլրդ դրամ: Այսինքն՝ կապիտալ ծախսերը շուրջ 70%-ով թերակատարվել են:

## 5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

**Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ**




**Պետական բյուջեն շարունակում է իրականացվել հավելուրդով, որը էապես գերազանցում է նախորդ տարվա մեծություններին:** ՀՀ պետական բյուջեի ծախսերը ընթացիկ տարվա հունվար-մարտին ավելի քիչ են եղել, քան եկամուտները, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի հավելուրդ շուրջ 60.9 մլրդ դրամի չափով՝ նախորդ տարվա 28.7 մլրդ դրամի դիմաց: Ընդ որում, ծախսերի քիչ լինելը հիմնականում պայմանավորված է կապիտալ ծախսերի նվազմամբ, ինչը նշանակում է, որ կապիտալ ծախսերի կատարողականի հետ կապված խնդիրներն ավելի են խորանում:

## 5.4. Պետական պարտք

**2023թ. մարտին ՀՀ պետական պարտքի ԱՄՆ դոլարով արտահայտված ծավալը աճել է 16.5%-ով, իսկ դրամով արտահայտված ծավալը նվազել է 7.3%-ով**: Կառավարության պարտքը նույն միտումներն է ունեցել՝ դոլարային արտահայտությամբ աճել է 16.4%-ով, իսկ դրամային արտահայտությամբ նվազել է 7.4%-ով: Այդպիսի զարգացումների հիմնական պատճառը ՀՀ դրամի արժևորումն է: Հետևաբար, առավել ճիշտ կլինի դիտարկել դրամով արտահայտված ներքին (ներքին արժույթով) պարտքը, որը մարտին՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 31.2%-ով, և դոլարային արտահայտությամբ արտաքին (արտարժութային) պարտքը, որը նվազել է 5.1%-ով: Այս ցուցանիշները մատնանշում են այն, որ կառավարությունը շարունակաբար մեծացնում է ներքին պարտքի կշիռը ընդհանուր պարտքի պորտֆելում, որը մարտի վերջի դրությամբ հասել է 43.5%-ի:

**2023թ. մարտին պետական պարտատոմսերի տոկոսադրույքները շարունակել են մնալ բարձր մակարդակում, սակայն ցուցաբերել են որոշակի կայունացման միտում:** Կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2023թ. մարտին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ բարձր է եղել շուրջ 1.5 տոկոսային կետով, իսկ միջնաժամկետ պարտատոմսերինը՝ 1.4 տոկոսային կետով: Ընդ որում, միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են փետրվարի համեմատ 0.1 տոկոսային կետով:

**Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %**




## 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

### 6.1. Գնաճ

**Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %**



**2023թ. մարտին գնաճի տեմպը կտրուկ դանդաղել է՝ մուտք գործելով ՀՀ ԿԲ թիրախային միջակայք:** 2023թ. մարտին 12-ամսյա գնաճը կազմել է 5.4%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 2.7 տոկոսային կետով: ՀՀ ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը հունվար-մարտ ամիսներին չի բարձրացրել՝ թողնելով նույն մակարդակում:

### 6.2. Ավանդներ

**Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %**




**2023թ. մարտին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների աճի տեմպը գտնվել է զգալիորեն բարձր մակարդակում:** 2023թ. մարտի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել է 27.8%-ով՝ փետրվարի համեմատ արագանալով 3.0 տոկոսային կետով: Ավանդների նման աճը բացատրվում է նախորդ տարվա վերջին կուտակված ավանդների պաշարներով, որոնք, սակայն, 2023թ. մարտին 2022թ. դեկտեմբերի համեմատ նվազել են ընդամենը 0.6%-ով (իսկ ոչ ռեզիդենտների ավանդները նվազել են 10.6%-ով): Այնուամենայնիվ ոչ ռեզիդենտների ավանդների ծավալների աճը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ բավական բարձր է եղել՝ կազմելով 54.7%:

**Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ**




Ավանդների աճին շուրջ 11.3 տոկոսային կետով դրական նպաստում են ունեցել ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները: Ռեզիդենտների շարքում ավանդների աճին բարձր՝ շուրջ 7.9 տոկոսային կետով նպաստում է ունեցել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների ծավալի 16.7%-ով աճը, և միևնույն ժամանակ ձեռնարկությունների ավանդների աճը ունեցել է էական նպաստում՝ շուրջ 6.8 տոկոսային կետի չափով:

## 6.3. Վարկեր

**Վարկերի ծավալների աճի տեմպը 2023թ. մարտին արագացել է:** ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2023թ. մարտին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 6.4%-ով, իսկ 2022թ. դեկտեմբերի համեմատ՝ 4.3%-ով:

**Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %**







Վարկերի աճը հիմնականում տեղի է ունեցել ռեզիդենտներին տրամադրված վարկերի 6.8% աճի հաշվին, որն ընդհանուր վարկերի աճին նպաստել է 6.4 տոկոսային կետով: Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճի տեմպն էականորեն դանդաղել է՝ կազմելով 0.7%՝ նախորդ ամսվա 7.5%-ի փոխարեն:

**Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %**




Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը հիմնականում պայմանավորված է տնային տնտեսությունների վարկերի շուրջ 16.5% աճով: Իրավաբանական անձանց տրամադրված վարկերի ծավալը 2023թ. մարտին նվազել է -1.6%-ով:

**Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ**




Ռեզիդենտների[8] շարքում վարկերի աճին դրական նպաստում են ունեցել հիմնականում հիպոթեքային վարկերը, որոնց աճը կազմել է 28.6%, իսկ նպաստման չափը՝ 5.1 տոկոսային կետ: Վարկերի աճին էական նպաստում է ունեցել նաև սպառողական վարկերի աճը՝ շուրջ 2.4 տոկոսային կետ: Ծառայությունների, շինարարության և գյուղատնտեսության ոլորտներին տրամադրվող վարկերի ծավալները նույնպես աճել են՝ ընդհանուր վարկերին ունենալով փոքր չափով դրական նպաստում:

[8] Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

## 6.4. Դրամական փոխանցումներ

**Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը[9]**




**Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ բարձր աճերը շարունակվում են նաև 2023 թվականին**: 2023թ. փետրվարին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 332.1 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա փետրվարի 56.1-ի դիմաց)՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով շուրջ 5.9 անգամ:

# 7. ԱՄՓՈՓՈՒՄ

**1. 2023թ. սկսվել է բարձր տնտեսական աճերով՝ հիմնականում պայմանավորված բազայի էֆեկտի ազդեցությամբ:** Տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի) դինամիկան 2023թ. ընթացքում զգալիորեն կապված կլինի նախորդ տարիների զարգացումների հետ՝ նախորդ տարվա աճի դանդաղման ամիսներին, ընթացիկ տարում գրանցելով աճի արագացում և ընդհակառակը (այս երևույթը կոչվում է բազայի էֆեկտ): Սա նշանակում է, որ տարվա հաջորդ ամիսներին հնարավոր է նկատվի տնտեսական աճի տեմպի դանդաղում, ինչի արդյունքում տարեկան տնտեսական աճը կարող է ցածր լինել սպասվածից:

**2. Արդյունաբերության աճի տեմպն արագացել է,** սակայն, քանի որ այն կապված է նախորդ տարվա նույն ամսում արդյունաբերության աճի անկման հետ,

[9] Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումների տարբերությունը ԱՄՆ դոլարով:

ապա կարող ենք նշել, որ արդյունաբերության ոլորտում խնդիրները դեռևս պահպանվում են՝ վտանգելով տնտեսության աճի երկարաժամկետ ներուժը:

**3. Պետական բյուջեի կապիտալ ծախսերի գծով նախորդ ամիսների մտահոգությունները հաստատվում են**: 2023թ. առաջին եռամսյակում իրականացվել է ընդամենը 30.4 մլրդ դրամի կապիտալ ծախս (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր), մինչդեռ ըստ բյուջեի պլանի նախատեսված էր իրականացնել 98.1 մլրդ դրամ: Այսինքն՝ կապիտալ ծախսերը շուրջ 70%-ով թերակատարվել են: Սա ցույց է տալիս, որ կառավարության ջանքերը կապիտալ ծախսերի կատարողականի բարձրացման ուղղությամբ նշանակալի արդյունքների չեն հանգեցրել: Այս իրավիճակում, վտանգի տակ է դրվում նաև 2023 թ. պետական բյուջեի կապիտալ ծախսերի տարեկան պլանի իրականացումը, ինչն իր հերթին կվտանգի նաև բարձր տնտեսական աճի ձևավորումը:

**4. Հարկային եկամուտների հավաքագրման տեմպը հետ է մնում տնտեսական ակտիվության աճից**: Հարկային եկամուտների աճի տեմպը 2023թ. հունվար-մարտին կազմել է 15.2%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 2.5 տոկոսային կետով: Սակայն անվանական տնտեսական աճը նույն ժամանակահատվածում ավելի բարձր է եղել՝ կազմելով շուրջ 20.3%, ինչը նշանակում է, որ հարկային եկամուտների հավաքագրումը հետ է ընկնում տնտեսական ակտիվությունից: Այս պարագայում վտանգի տակ է նաև հարկեր/ՀՆԱ հարաբերակցության պլանավորված բարելավումը 2023 թվականին:

*«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:*

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*